

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի¹ վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 9-րդ հոդվածով փոփոխվող Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի² 96-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնդի շտաբի պետը պարտավոր է նաև կազմել գնդի պայմանագրային զինվորական ծառայության սպայական և ենթասպայական կազմերի զինծառայողների արձակուրդների ժամանակացույցը:

Համապատասխան դրույթի գործող տարբերակում սահմանված է, որ գնդի շտաբի պետը պարտավոր է մշակել գնդի զինծառայողների արձակուրդների գրաֆիկ և վերահսկել դրանց կատարումը: Ստացվում է, որ փոփոխվող տարբերակում գնդի շտաբի պետը այլևս հսկողություն չի իրականացնելու արձակուրդների գրաֆիկի պատշաճ կատարման նկատմամբ: Ավելին, Նախագծում տվյալ հսկողական գործառույթը ընդհանրապես չի սահմանվում, ինչի արդյունքում կարող է առաջանալ օրենսդրական բաց:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում նախատեսել գնդի զինծառայողների արձակուրդների ժամանակացույցի կատարման նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:

2. Նախագծի 17-րդ հոդվածով Կանոնագրքի 194-րդ հոդվածում կիրառվող «տեղակայման շրջան» բառերը փոխարինվում են «տարածք» բառով: Սակայն «տեղակայման շրջան» բառերը փոփոխված չեն Կանոնագրքի 225-րդ, 309-րդ և 332-րդ հոդվածներում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

¹Այսուհետ՝ Նախագիծ

²Այսուհետ՝ Կանոնագիրք

Ուստի, Նախագծում տեղ գտած և Կանոնագրքում առկա ձևակերպումների միասնականությունը և հստակությունն ապահովելու համար առաջարկում ենք Կանոնագրքի 225-րդ, 309-րդ և 332-րդ հոդվածները համապատասխանեցնել կատարվող փոփոխություններին:

3. Կանոնագրքի 268-րդ հոդվածի երրորդ պարբերության առաջին նախադասությունը սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում կայազորի պետի հրամանով որոշ զորամասերում հսկիչ-անցագրային կետի օրապահներն ու հերթապահները, վաշտի օրվա վերակարգը և հավաքակայանի օրապահները կարող են զինվել երկու լիցքավորված պահեստատուի (պահունակով 30 փամփուշտ) ունեցող ավտոմատներով (կարաբիններով):

Նախագծի 20-րդ հոդվածով նախատեսվում է «զորամասերում» բառից հետո լրացնել «սերժանտական կազմից նշանակված հավաքակայանի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, ինչպես նաև» բառերը: Տվյալ լրացման ընդունման դեպքում Կանոնագրքի համապատասխան դրույթում կրկնվելու են «հսկիչ-անցագրային կետի հերթապահը» բառերը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:

Ուստի, առաջարկում ենք Նախագծի 20-րդ հոդվածից հանել «հսկիչ-անցագրային կետի հերթապահը» բառերը:

4. Առաջարկում ենք նաև շտկել Նախագծի 24-րդ հոդվածում առկա տեխնիկական վրիպակը: Նման առաջարկի անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ Կանոնագրքի 352-րդ հոդվածում բացակայում է այն բառը, որից հետո առաջարկվում կատարել համապատասխան լրացումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ